Հաշվետվություն

ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ Արսեն Սառիկյանի՝ 2024 թվականի ապրիլի 28-ից մայիսի 4-ը Ավստրիական Հանրապետություն (ք. Վիեննա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**

Արսեն Սառիկյան – ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ավստիական Հանրապետություն, քաղաք Վիեննա, 2024 թվականի ապրիլի 28-ից մայիսի 4

3. **Հրավիրող կողմը**

Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) և Վիեննայի համատեղ ինստիտուտ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի համար էր նախատեսված գործուղումը)**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Հարկերի հավաքագրում և ապառքների կառավարում» (Tax Collection and Arrears Management) խորագրով դասընթացին: Դասընթացի նպատակն էր ներկայացնել հարկային ապառքների (օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետներում չվճարված հարկի գումարի) կառավարման՝ հարկային ապառքների առաջացումը կանխարգելելու, դրանք ժամանակին հավաքագրելու, հարկադիր գանձման, ապառքների դուրսգրման կարևորությունը, միջազգային պրակտիկայում դրանց կանխարգելման նպատակով կիրառվող արդյունավետ գործիքները, հարկային պարտավորությունների վճարման մասով կամավոր կարգապահությունը խթանող մեխանիզմները, դրանց իրավական ու գործնական շրջանակը:

5. **Քննարկված թեմաները**

Դասընթացի ընթացքում քննարկված թեմաներն էին՝

ա) հարկերի հավաքագրման և ապառքների կառավարման հիմնահարցերը որպես հարկային մարմինների ռազմավարական պլանավորման բաղադրիչ,

բ) հարկերի վճարման գծով կարգապահության բարելավման ծրագրերի մշակումը և իրականացումը, հարկերի վճարման գծով կարգապահությունը՝ որպես կատարողականության գնահատման ցուցանիշ,

գ) ապառքների կառավարման ուղղությամբ միջազգային պրակտիկայում կիրառվող փորձը, միջազգային կազմակերպությունների կողմից մշակված ուղեցույցները, գնահատման ցուցանիշները:

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, անդրադարձ է կատարվել հարկային մարմինների ռազմավարական պլանավորման ու կառավարման գործընթացում հարկերի հավաքագրման ու ապառքների կառավարման բաղադրիչը ներառելու կարևորությանը: Հարկերի ժամանակին վճարման ապահովումը պետք է սահմանվի որպես ռազմավարության թիրախ և իր արտացոլումն ունենա հարկային եկամուտների ապահովման ամբողջ գործընթացում (սկսած հարկ վճարողի գրանցումից): Ռազմավարական ծրագրերից պետք է բխեն հարկերի վճարման կարգապահության բարելավման ծրագրերը, որոնք ներառում են՝

ա) սահմանված ժամկետներում հարկերի վճարման մասով առկա ռիսկերի վերլուծությունը,

բ) նշված ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները (որոնք հնարավոր է իրականացնել հասանելի ռեսուրսների շրջանակներում),

գ) ակնկալվող արդյունքները, դրանց գնահատման ցուցանիշները,

դ) պատասխանատուները:

Հարկերի վճարման գծով կարգապահության բարելավման ծրագրերով սահմանվող միջոցառումները ներառում են, մասնավորապես,

ա) ծառայությունների մատուցումը, հարկերի վճարումն ապահովելու նպատակով հատուկ հեռախոսազանգերի կենտրոնի ստեղծումը, անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, օրինակ՝ ավտոմատ ծանուցումների ուղարկում, վճարումների կատարման պարզեցված միջոցների ներդրում,

բ) անձնակազմի կարողությունների ընդլայնումը, հարկադիր գանձման ստորաբաժանման ձևավորումը, աշխատակիցների անհրաժեշտ քանակի ու պատրաստվածության ապահովումը,

գ) օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունները, հարկադիր գանձման նոր գործիքների ներդրումը (որոշ երկրներում հնարավոր է հարկերի չվճարման դեպքում հարկ վճարողին զրկել տվյալ գործունեության իրականացման լիցենզիայից),

դ) տեղեկատվության նոր աղբյուրների վերհանումը:

Ապառքների կառավարման արդյունավետության համար կարևոր է նաև համապատասխան կազմակերպական մշակույթի ձևավորումը, «վճարումներին ուղղված մտածելակերպի» (payment thinking) արմատավորումը: Վերջինս ներառում է, մասնավորապես,

1) հարկ վճարողների վարքագծային վերլուծությունը, որի արդյունքներով պետք է ներդրվեն հարկերի վճարման գործընթացի դյուրինացմանն ուղղված հասցեական գործիքներ ու ձեռնարկվեն ապառքների առաջացումը կանխարգելող միջոցներ,

2) հարկային եկամուտների ապահովման բոլոր գործընթացներում (սպասարկում, վերլուծություն, ստուգում) որպես վերջնանպատակ պետք է լինի սահմանված ժամկետներում հարկերի վճարման ապահովումը:

Դասընթացի ընթացքում ներկայացվեց նաև հարկերի վճարման ու ապառքների կառավարման մասով առաջատար հարկային մարմինների կողմից կիրառվող փորձը, ԵՄ, ՀՄՆԿ (հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության), ՏՀԶԿ կողմից մշակված մեխանիզմները (գնահատման չափորոշիչները), հարկային մարմինների ախտորոշիչ գնահատման գործիքը (TADAT), որով ներկայացվում են վճարման ու ապառքների կառավարման գծով հարկային մարմնի կատարողականության գնահատման ցուցիչները: Վերջիններիս կողմից սահմանված ժամկետներում հարկերի վճարման ապահովման ու ապառքների արդյունավետ կառավարման գծով կանոնվում են հետևյալ 4 սկզբունքները.

ա) կանխարգելում,

բ) վաղ հավաքագրում (մինչ հարկադիր միջոցների կիրառումը),

գ) հարկադիր միջոցների կիրառում,

դ) իրատեսական հավաքագրում, ներառյալ՝ անհուսալի պարտավորությունների դուրսգրումը:

Դասընթացի ընթացքում ներկայացվեցին նաև մի շարք հարկային մարմինների (Դանիա, բելգիա, Ֆրանսիա, Իտալիա, Շվեյցարիա, Մեծ Բրիտանիա, Լյուքսեմբուրգ և այլն) կողմից յուրաքանչյուր սկզբունքի մասով ներդրված գործիքները:

Վաղ հավաքագրման մասով արդյունավետ գործիքներ են համարվում՝

ա) տույժերի ու տուգանքների կիրառումը,

բ) աղբյուրի մոտ հարկի գանձումը,

գ) հիշեցում-ծանուցումների ուղարկումը (ընդ որում էլեկտրոնային եղանակով կամ հեռախոսային ծանուցումների ուղարկումը միջազգային պրակտիկայում համարվում է վճարումների ապահովման ու ապառքների կառավարման առավել քիչ ծախսատար գործիքներից):

Հատկանշական է, օրինակ, Նոր Զելանդիայի կողմից հարկերի վաղ հավաքագրման մասով կիրառվող փորձը: Վերջինս կիրառում է հասցեական հիշեցում-ծանուցումներ նամակների, հեռախոսազանգերի, սոցիալական մեդիայի միջոցով: Լյուքսեմբուրգում հարկային մարմինները, որպես հարկադիր միջոց, կարող են կազմակերպության ղեկավարին անձնական պատասխանատվության ենթարկել կազմակերպության հարկային ապառքների համար:

Հարկերի վաղ հավաքագրումը կարևոր է նաև այն առումով, որ որոշակի ժամանակահատվածից հետո հարկերի հավաքագրումն էականորեն դժվարանում է կամ դառնում գրեթե անհնար (լավագույն ժամանակահատվածը մինչև 12 ամիսն է):

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, մասնավորապես, շահութահարկի գծով հարկային պարտավորություններից 16 ամիս անց հնարավոր է հավաքագրել այդ գումարի միայն 20%-ը, իսկ սահմանված ժամկետից 4 ամիս հետո ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների գումարի ընդամենը 40%-ն է հնարավոր հավաքագրել:

Դասընթացի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև կեղծ կամ կանխամտածված սնանկության (phoenix risk, փոխկապակցվածության) ռիսկերին, դրանց արդյունքում ապառքների կուտակման ու չվճարման, այդ ռիսկերի կանխարգելման միջոցառումներին: Նշված ռիսկի կանխարգելման նպատակով կիրառվում են հետևյալ գործիքները.

ա) շահագրգիռ պետական մարմինների հետ համագործակցություն,

բ) տեղեկատվության հավաքագրում, համադրում՝ հավանական ռիսկային ոլորտների վերհանում,

գ) ՀԼՄ-ներով հրապարակումներ,

դ) քրեական պատասխանատվության միջոցների խստացում, հիմնադիրի նկատմամբ պատասխանատվության կիրառում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացի ընթացքում կազմակերպվել են խմբային քննարկումներ, առաջադրվել են խնդիրներ, որոնց մասով աշխատանքային խմբերը ներկայացրել են լուծման տարբերակներ: Մասնակիցները ներկայացրել են իրենց երկրների կողմից հարկերի վճարման գծով կարգապահության բարելավման ուղղությամբ կիրառվող մեխանիզմները:

7. Հանդիպման կամ համաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Դասընթացի սկզբում և ավարտին մասնակիցներին տրվել է ստուգում-հարցաթերթ, որի արդյունքներով տրվել է դասընթացին բարեհաջող մասնակցության վերաբերյալ հավաստագիր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռնեց ՊԵԿ ներկայացուցչին տեղեկատվություն ստանալ առաջատար հարկային մարմինների կողմից հարկերի հավաքագրման ու հարկային ապառքների արդյունավետ կառավարման գծով կամավոր կարգապահության ապահովման ուղղությամբ կիրառվող փորձի, միջազգային կազմակերպությունների կողմից այդ հիմնահարցի մասով մշակված ուղեցույցների վերաբերյալ:

Դասընթացի նյութերն էլեկտրոնային եղանակով ներկայացվել են հարկ վճարողների հետ աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները համակարգող ՊԵԿ նախագահի առաջին տեղակալին ու իրավաբանական վարչության պետին՝ դրանց հիման վրա իրենց աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Սառիկյան

07.05.2024թ.